

Գու խընդաղին ատւր աշխարհի բզնոր ըզմեծ աւետիս,
 Թէ ուռն օսկի հարաւ կրկին՝ աստ հիմն արկաւ տաճարիս,
 եւ ըղպըսակզ դիր ի զուլի ի սուրբ ճակատ Վեհազին
 Որ զայս կանգնեաց մեզ ճեմարան յօճան բարեաց Հայ ազգին:

Ի դիմաց Երբորդի դասարանի
 Ս. Գեորգեան ձեւարանի.

Ի Ս. Լ. Ը. Լ. Խ. Զ. Ի. Զ.

ԸՌ ՎԵՆՓՈՒ Տ՝ Տ՝ ԳԼՈՐԳ
ՊԵՏՐՈՎԻԿՈՍ ԱՄԵՆԱՅԵ ՀԱՅՈՑ

ՈՒՂԵՐԶ.

Հոյաթեւեան հանդոյն արժեոյ անգրուվար,
 Փայրակնածեւ անցեալ երկնից ընդ կամար,
 Հուր ընդ օրնդուս երկվարին բաց թըւչին,
 Ի դափր օտիցըն կայծակունք հաստանին,
 եւ վերելեալին հանդէպ մեծի տաճարին,
 Առեալ դադար բիւրաւորաց ի զընին
 Հար եւ ըսպան ի սուր հարուած նիզակին
 Զանդուծ վիշապըն զիւր ոտիս ահազին:
 Սա մեր պաշտպան, անընկճելի փոյնեան,
 Ի սա պարծի մերս Գեորգեան ճեմարան.
 Սա կարապետ յառաջընթաց յստպարէզ
 Ըզխոյ ըզխուծ բառնայ ցըրուէ բաշապէս:
 Մըշտամըռունչ մաղթեմք ոյլ մեծ Հայրապետ,
 Կացցէ յաւէրժ անսասան Քոյզ դաստակերտ,
 եւ տօնեսցեն որդիք Հայկայ դեղապար
 Ըզտօն անուանդ եւ տարեղարծս անհամար:

Ի դիմաց Հինգերորդի դասարանի
 Ս. Գեորգեան ձեւարանի.

ՆՈՒՒՐԱՏՈՒ ԳԱՂՐԻՖԵՅԻՔ.

Ի նպաստ Հին - Պայազիտեցի եւ Աղբա-
 կեցի Հայոց Գալթիթէն հաւաքեալ գրա-
 մոց առթիւ Գեր. Անդրէաս Արքեպիս-
 կոպոսի գրած յայտարարութիւնը՝ զոր

անցեալ ամագրում յիշած եւ հրա-
 տարակել խոստացած էինք, ահաւասիկ
 նուիրատուաց ցուցակին հետ կտպեմք:

« Գերդաստունք իբր երեք հարիւր ի
 Բայազիտեցի եւ յԱղբակեցի Հայազ-
 գեաց կողոպտելոց եւ հարուածելոց ան-
 տի յերեսաց պատերազմին՝ մինչ չեւ ժա-
 մանեալ իմ՝ ի Գալթիթ՝ խոյս տուեալ
 էին յԱտրպատական աշխարհ ապաս-
 տան գտանել Բայազիտեցւոցն ի Մա-
 կու գիւղաքաղաք եւ ի Քիշմիշթէփէ
 գիւղ հայաբնակ եւ Աղբակեցւոցն ի
 Սալմաստու գաւառին:

« Կսկծագին էին վէսքն, զորոց լուայ
 աօտանօր յեկաւորաց ի կողմանցն, թէ
 որպէս նոքա տուայտին ի յետին թը-
 շուառութեան մուրացածոյ հայթհայ-
 թելով զհացն չորաբեկ: Ուստի հար-
 կաւոր համարեցի նուաստիս յատենի
 Ս. Եկեղեցւոյ յորգօր կարգալ բարե-
 պաշտ ժողովրդոց մերոց օգնել ապաս-
 տանելոցն այնոցիկ քրիստոնէական ըզ-
 գացմամբ որքան կարելի իցէ: Այ ի դուր
 անցին բանք քարոզութեան իմոյ. զի ի
 միում իսկ եօթնեկի յաջողեցին ինձ
 շնորհք Տեառն հանգանակել զ2818
 զռան Պարսից գրամ (850 բուբլի 15

կողմ արժաթ): Ի նմին խակ միջոցի ինքնայորդոր շարժեալ կարեկցութեամբ եւ Եւրոպացւոց բնակելոց ի քաղաքիս ժողովեալ էին յինքեանս 808 զուան 50 կակ (234 բուբլի արժաթ.) զորս եւ մատուցին ինձ ի ձեռն Հիւպատոսին Անգղիոյ:

«Վեհափառ Տէր, ի գումարաց աստի երկու հազար զուան յանձն արարաք վանահօր վանաց Առաքելոյն Բարդուղիմեայ Եղիազար Վարդապետի Ասկանեան բաժանել Ազբակեցւոց ի Սալմաստ ապաւինելոց գործակցութեամբ տեղական իշխանաւորաց ոմանց. եւ միանգամայն հոգալ որքան կարելի իցէ ըստ զօրութեան գրոց Սահաբ-Դիւանի յանուն դատաւորաց Սալմաստու եւ Խոյի՝ ի ձեռս բերել զյափշտակեալ կայս . . . : Իսկ զհազար վեց հարիւր զուան առաքեցաք ի Մակու առ Պ. Սարգիս Յօնանեան բաժանել նոյնպէս խորհրդակցութեամբ առաջաւորաց տեղոյն ապաւինելոց անգր Բայազիանեցւոց:»

Յուցակ նուիրասուաց.

	Ղ	Ի
Անդրէաս Արքեպիսկոպոս	50	
Բարդուղիմէոս Արեղայ ճուղուրեանց	40	
Յովսէփ Աւագ քհնյ. Տ. Յովսէփեան	21	
Աստուածատուր Ա. քհնյ. Տ. Չարսրեան	22	
Մեսրոպ քահանայ փափազեանց	40	
Ծատուր Խան Սէթխանեան	50	
Միրզայ Անտօն խան Մ. Երուանդեանց	24	
Արղուման Նազարբէկեանց	100	
Սրբահամ Յ. Վարդանեանց	500	
Եղարք Միրայէլեանց	150	
Սիմէօն Թումանեանց	250	
Այգակ Կրէյնֆէլտ	55	
Աստուածատուր Ղարաբէկեան	103	

Գասպար Շահնազարեանց	100
Խաչատուր Տ. Չարսրեանց	140
Ալէքսան Տ. Յօնանեանց	140
Թ. Մ. Խափամասեան կղարք	100
Սարգիս Տ. Յօնանեանց	70
Ահարօն Չարդարեանց	100
Յովակիմ Թամիրեան	50
Ընկերութիւն դերձակ հասարակութեան	100
Մկրտում Առաքել Պատմագրեանց	40
Ստեփան Ներսէսեանց	40
Ընկերութիւն Ասկերիչ հասարակութեան	80
Յովսէփ Տ. Յովհաննէսեան Տ. Գրիչ	50
Պորեանց	50
Մարգար Հ. Նազարբէկեանց	50
Նիկողայոս Մ. Բարաջանեանց	15
Դանիէլ Գրիգորեան	10
Աւետիս Յովհաննէսեան	15
Յովսէփ Սոսիկեան Յունանեանց	50
Պօղոս Պօղոսեան	55
Երեմիա Ա. Մկրտչեան	24
Մովսէս Ներսէսեան	50
Գրիգոր Յ. Խափանեանց	15
Գրիգոր Յարութիւնեան	20
Վարդան Շիրմազանեանց	5 50
Սարկաւագ Յարութիւն	5 50
Յովհաննէս Նանաջանեան	5
Խաչատուր Ա. Անանեան	21
Գէորգ Շիրմազանեանց	5 50
Յարութիւն Հայրապետեան	10
Վիլչէն Փարցեան	10
Յովհաննէս Տ. Յակովբեանց	50
Գալուստ Աթմանդիլեան	15
Չարարիս Սահակեան	5
Չոհրաք բէկ Բալարբէկեան	20
Բարսեղ Յովհաննէսեան	20
Ալէքսան Ս. Բժշկեանց	15
Յարութիւն Հայրապետեան	6
Յարութիւն Սուլխանեան	7
Ղազար Փիրիմեան	5 50
Յարութիւն Ասրիեան	5 50
Միրզայ Մէհրաբեան	10
Սահակ Յովհաննէսեան	10

Սարգիս Մովսէսեան Ա. Եանդրեանց	5	50
Սաֆարի Պօղոսեան	5	50
Մարգար Միրզայեան	5	50
Եղիս Առաքելեան	5	30
Անդրէ Գուլմասեան	5	50
Աւետ Արրահամեան	4	50
Նիկոլայ Գալստեան	5	50
Պետրոս Մատինեան	40	
Աստուածատուր Վարդանեան	40	50
Պետրոս Մէլիք Սարգսեանց	20	
Աստուածատուր Փանուէլիան	40	
Արզուման Հայրապետեան	5	50
Յովհաննէս Աղայեանց	40	
Սարգիս Մելիք Ջհանեան	40	
Սալատ Հայրապետեանց	4	50
Մկրտիչ Մնացականեան Զորոնեանց	20	
Ոմն	40	
Գէորգ Զաքարեանց	7	
Գրիգոր Բէշանեան	7	
Մնացական Յարութիւնեանց	7	
Կարապետ Ա. Յարութիւնեանց	40	
Գրիգոր Ա. Եղաղիկեանց	55	
Մարգար Ա. Շահնազարեանց	20	
Եղիսաբէթ Մովսէսեան	20	
Նարամի Գիլանբէկեան	5	
Յովսէփ Ամիրեան	40	50
Յովհաննէս Նիկողայոսեան	4	50

2818

Երոպացի նութաստօք.

Ուլիամ Զ. Աբօտ	50
Տիկին Աբօտ	50
Միրզայ — Ալի — Էկրար — խան	40
Մ. Էմէրայ	50
Մ. Հսիարի	20
Հ. Սաիվէնս	50
Վ. Սաօնէսարիտ	40
Բարեբար ոմն	40
Զիկլէր եւ ընկ.	400
Սուլվանօ օղլու եւ ընկ.	400
Ա. Ղարաբէկով	405
Ամերիկական բարոզիչք	400
Եսատուր խան	40

Լ. Կասարուա	50
Կարտալի եւ ընկ	20
Հարէղօնիտի եղբարք եւ ընկ.	50
Մ. Անտօնիատի	50
Ի. Ս. Հնդկա — Եւրօպական ընկ.	40
Ա. Ստահլ	40
Երեմիա	5 50
Բժիշկ Իւրիստ	40

808 50

ԵՐՐՈՐԻ ԴԱՍԱՐԱՆԲ

ԴՊՐՈՑԱՅ ՀԱՅՈՑ ԱՍՏՐԱԽԱՆՈՒ

ԻՅՔԱՉՐՈՒՄԷԱՆ ԱՅՐԱՍԻ ԱՏԱՉՐՈՒՄ

Ի հետեւումն Առաջարկութեան Գերապատիւ Առաջնորդի Աստրախանայ եւ Հոգարածութեան Հոգեւոր Երկրային Երկուց սեռից Գարացաց՝ բարեհասակեամբ եւ լուծմամբ ծայրագոյն Հոգեւոր Իշխանութեան յայտ ամի ի 16 Յոգոստոսի բացան երրորդ դասարանք երկուց սեռից Ազգային — Հոգեւոր Գարացաց բաղարիս յառաջադիմութիւն աշակերտիւց յայնս՝ սրբ պահպանին զումարօք Սուրբ Աստուածամայր Աւագ Եկեղեցոյ եւ տոկոսեօք կտակաւանդ զումարաց հանգուցեալ բարեպաշտ անձանցն Կորապետի Զաքարեան Գալստեանի, Յարութիւնի Եսայեան փուլարդեանց եւ Մկրտչի Արրահամեան Սուրաբէկեանց: — Տարեկան ծախք սահմանեալ են ի ռոմիկ ուսուցչաց եւ ի պէտս ուսումնական պիտոյից մի հազար ութ հարիւր յիսուն եւ ութ բուրլի երեսուն եւ հինգ կոպէկ, (1858 բուրլի 55 կոպէկ): Աւանդին յետագայ առարկայք ուսմանց, Կրօնադիտութիւն, Տումարագիտութիւն, Հայկական լեզու, Հայոց Պատմութիւն, Ռուսաց լեզու, Ռուսաց եւ ընդհանուր պատմութիւն, Գաղիացեոց լեզու, Բնագիտութիւն, Թուարանութիւն, Աշխարհագրութիւն, Գծադրութիւն, տղայոց Եկեղեցական Երգեցողութիւն հանդերձ Զայնագրութեամբ եւ Օրիորդաց Ազգային երգք *) եւ Զեռագոր-

(*) Յուսանեւն օրիորդաց զազգային երգք՝ պարտին եւ կարեն ուսանել եւ զՏայիական ձայնագրութիւն, որով կարեն առաւել հեշտեալ ուսանել նաեւ զամենայն երգք եւ զեղանակս: Ե. Խմբ.